Արձանագրություն N 3
Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կարիքների համար ՄՊՀ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցությունների նստի

Գնահատող հանձնաժողովի բացման նիստը տեղի ունեցավ 29.11.2021թ. ժամը 15:00-ին ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 հասցեում

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝
- Նարա Դավթյան / Հանձնաժողովի վարչատնտեսական վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ
- Անուշ Ստեփանյան / Հանձնաժողովի քարտուղարության պետ
- Գոհար Սահակյան /Հանձնաժողովի քարտուղարության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԲԱ գնահատող աշխատակազմ
- Աննա Մկրտչյան /Հանձնաժողովի հաշվապահական հաշվառման ավագ հաշվապահ
- Դավիթ Իսավերդյան / Հանձնաժողովի վարորդ

Քարտուղար՝ Մերի Մկրտչյան «Աութսորս» ՍՊԸ-ի աշխատակից /լիազորված անձ/

Օրակարգ

1. **Գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցությունների նիստի մասին**

1.1 Սույն թվականի նոյեմբերի 29-ին ժամը 15:00-ին «Գարանտ Մոթորս», «Ֆլեշ Մոտորս» և «Լուքսորիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները հրավիրվել էին գների նվազեցման շուրջ վարվող բանակցությունների:

1.2 «Ֆլեշ Մոտորս» և «Լուքսորիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները չեն ներկայացել գների նվազեցման շուրջ վարվող բանակցություններին՝ նախապես ներկայացրած գնային առաջարկների անփոփոխ լինելու պատճառով:

1.3 «Գարանտ Մոթորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սակարկել է իր գնային առաջարկը 74 963 150 /յոթանասունչորս միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար մեկ հարյուր հիսուն/ ՀՀ դրամից 62 400 000 /վաթսուներկու միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամի:

2.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

2.1 Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՄՊՀ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «Գարանտ Մոթորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

2.2 Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից կազմակերպված «ՄՊՀ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:

2.3 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Նարա Դավթյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Անուշ Ստեփանյան
	_____	Գոհար Սահակյան
	_____	Աննա Մկրտչյան
	_____	Դավիթ Իսավերդյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Մերի Մկրտչյան